Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2015 թ. դեկտեմբերի 11-ին կայացած թիվ 5 նիստի

Օրակարգում՝

- Դոցենտի գիտական կոչման շնորհման հարցը
- Ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման երաշխավորման հարցը
- Թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը
- Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 40 անդամներից նիստին ներկա էին 37-ը:

- **Դոցենտի գիտական կոչման շնորհման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ. Նելլի Ալեքսանդրի Հովհաննիսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ֆ.Դ. Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հիմք ընդունելով ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի II 5Բ կետը՝ երաշխավորել Ն.Ա. Հովհաննիսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

- **Ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման երաշխավորման հարցը**

Լսեցին՝ Տ. Մուշեղյանի անվան մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի կողմից ներկայացված Հ.Աղաբաբյանի և Ա.Առաքելյանի «Հոգեֆիզիոլոգիայի հիմունքներ» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման հարցը:

Ելույթ ունեցավ՝ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ. Ա.Ն.Առաքելյանը:

Որոշեցին՝ երաշխավորել «Հոգեֆիզիոլոգիայի հիմունքներ» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման:

Լսեցին՝ սնկաբանության և բուսաբանության ամբիոնի կողմից ներկայացված Ի.Մ.Էլոյանի, Ա.Վ.Պողոսյանի և Ե.Խ.Հովհաննիսյանի «Ռոկարիումների ձևավորման հիմունքները» ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցը:

Ելույթ ունեցավ՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր՝ Ս.Գ.Նանագյուլյանը:

Որոշեցին՝ երաշխավորել «Ռոկարիումների ձևավորման հիմունքները» ուսումնական ձեռնարկը հրատարակման:

Լսեցին՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի կողմից ներկայացված Կ.Ա.Ղազարյանի, Հ.Է.Խաչատրյանի, Կ.Վ.Գրիգորյանի «Հողի էկոլոգիա» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման հարցը:

Ելույթ ունեցավ՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ՝ Ն.Ա.Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ երաշխավորել «Հողի էկոլոգիա» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման:

Լսեցին՝ կենսաքիմիայի ամբիոնի կողմից ներկայացված Հ.Մ.Կարապետյանի և Է.Խ.Բարսեղյանի «Էնզիմոլոգիայի ուսումնամեթոդական ձեռնարկ»-ի հրատարակման հարցը:

Ելույթ ունեցավ՝ կենսաքիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆեսոր՝ Է.Ս.Գևորգյանը:

Որոշեցին՝ երաշխավորել «Էնզիմոլոգիայի ուսումնամեթոդական ձեռնարկ»-ը հրատարակման:

- **Թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Լուսինե Աշոտի Մաթևոսյանի

թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ա.Հ.Թռչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝
1. հաստատել Լուսինե Մաթևոսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Կաթնաթթվային բակտերիաների տարբեր համակեցությունների հակամանրէային ակտիվությունը» Գ.00.14 «Կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ,
2. գիտական ղեկավար հաստատել ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ, պրոֆ. Ա.Հ.Թռչունյանին

ԼՍԵՑԻՆ՝ մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ /ներքին համատեղություն/, Կենսաբանության ԳՀ ինստիտուտի փոխտնօրեն, կրտսեր գիտաշխատող, կ.գ.թ. Կարեն Արմենի Թռչունյանի դոկտորական ատենախոսության թեմայի և գիտական խորհրդատուի հաստատման հարցը: Կարեն Թռչունյանը ներկայացրեց իր կատարած գիտական աշխատանքը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանը, կենսաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր՝ Ս.Պ.Հովհաննիսյանը, կենդանաբանության ամբիոնի պրոֆեսոր՝ Է.Մ.Եղիազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝
1. հաստատել Կարեն Թռչունյանի դոկտորական ատենախոսության թեման՝ «Մթնային խմորում իրականացնող բակտերիաներում մոլեկուլային ջրածնի արտադրության խթանման ուղիները», Գ.00.14 «Կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ,
2. գիտական խորհրդատու հաստատել ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ, պրոֆ. Ա.Հ. Թռչունյանին

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի համակարգող՝ Ա.Ֆ.Կարապետյանի զեկույցը: Նա նշեց, որ 2016-2021 թթ. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական որակավորման բարձրացման

հնգամյա ծրագրի համար անհարաժեշտ է ներկայացնել նոր մասնագիտական դասընթացների ցանկ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 2016-2021 թթ. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական որակավորման բարձրացման հնգամյա ծրագրի համար առաջարկել հետևյալ դասընթացները.

Կենսաբանության ֆակուլտետի դասախոս-ունկնդիրների համար՝

- Կենսաբանության արդի հիմնարար և կիրառական հիմնախնդիրները, 16 ժամ, դասավանդող դասախոս՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Արմեն Համբարձումի Թռչունյան
- Գենետիկայի ժամանակակից նվաճումները, 10 ժամ, դասավանդող դասախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ռ.Մ.Հարությունյան, կ.գ.դ., դոցենտ Գ.Գ.Հովհաննիսյան
- Կենսաբազմազանության ուսումնասիրում և պահպանություն, 16 ժամ, դասավանդող դասախոսներ՝ պրոֆեսորներ Ֆ.Դ.Դանիելյան, Ս.Գ.Նանագյուլյան, կ.գ.դ., դոցենտ Մ.Ս.Առաքելյան
- Սնկային հիվանդություններ, 10 ժամ, դասավանդող դասախոս՝ կ.գ.թ. Ե.Խ.Հովհաննիսյան

Հարակից (կամ այլ) մասնագիտության դասախոս-ունկնդիրների համար

- Կենսաանվտանգության հիմնահարցեր, 10 ժամ, դասավանդող դասախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Արմեն Համբարձումի Թռչունյան, կ.գ.թ. Կ.Մ.Գրիգորյան
- Կենսառեսուրսների կայուն կառավարում և օգտագործում, 10 ժամ, դասավանդող դասախոսներ՝ կ.գ.թ. Ն.Ա.Հովյաննիսյան, կ.գ.թ., դոցենտ Լ.Ռ.Համբարյան

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ Ա.Ֆ.Կարապետյան